ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 7 — ՅՈՒԼԻՍ 1889

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը։
Բաժանորդագինն է կանխիկ վճարելի՝ Տարեկան 8 ֆր. = 4 րբ.։ — Վեցամսեայ՝ 5 Ֆր. = 2 րբ. 50 կոպ.։
Մէկ թիւ առանձին կը վաճառուի 1 ֆր. = 50 կոպ.։

Խմբագրութեան կեդրոնավայրն է՝ Վիեննա, Մխիթարեան Միաբանութեան Մայր վանքը։
Ճամբու ծախքն խմբագրութեան վրայ է։
Ծանուցմունքն առանձին սակարկութեամբ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ։
ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ — Լէոնարտոյ տա Վինչի ի Հայաստան։
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ — Գրիգոր Սիմայեան։ (Պատկեր։)
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ — Առաքել Դաւրիժեցի։
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ — Առաւօտ։

ԱՐՈՒԵՍՏԻՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ — Սովորական դժբախտութեանց անմիջական դարմանը։
ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ — Պտղատու ծառոց պտուղը բազմացընելու վրայ։ — Ծլակի մշակութիւն։ — Ծառերու ներցուկներն անփուտ ընել։ — Ցակինթը բազմացընել տերեւով։

ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԽԱՉ ՈՒ ԾԵՓԻՉ — Վերջին ժամանակներէ վէպ մը։

ԱՅԼԵՒԱՅԼՔ
ՆՈՐԱԼՈՒՐՔ — ՏՆՏԵՍԱԿԱՆ — ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ ՌԱՄԿՕՐԷՆԻՆ ՎՐԱՅ

#### ՌԱՄԿՕՐԷՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն։)

#### 16.

#### Ե. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ

*Տարեգիրք եւ Օրինաց մատեան։*

Գրաւոր աշխատասիրութեամբ ռամկօրէն մատենագրութիւնն ճոխացընելու գործակից եղող մատենագրաց մէջ նշանաւոր դիրք կը բռնէ Սմբատ սպարապետ, (ծնեալ 1208ին[1], վախճանեալ 1276ին,) մին ի հռչակաւոր հայորդւոյն՝ որ պայծառացաւ ի ժամանակի իշխանութեան Ռուբինեանց։ Գրուածոց բանասիրական նիւթն ու նպատակն չի ներեր խօսիլ հեղինակիս ցեղին բարձր ազնուականութեան եւ թագաւորական զարմին հետ ազգակցութեան վրայ, եւ ոչ յառաջ բերել դեսպանագիտական ասպարիզի մէջ հայրենեաց մատուցած ծառայութիւնքն կամ պատերազմի դաշտաց վրայ կատարած քաջագործութիւնքն՝ որովք եւ կնքեց իւր դիւցազնական կեանքն։ Մեզի կը մնայ զՍմբատ նկատել պարզապէս իբրեւ ռամկախօս մատենագիր, որ գիտցած է այնպէս ճարտարութեամբ ի կիր արկանել իւր գրիչն՝ ինչպէս քաջութեամբ գործածած է իւր սուրն։ —

Հեղինակիս գրաւորական գործունէութեան վրայ՝ մինչեւ անցեալ դարուն վերջերն՝ այնչափ միայն ծանօթ էր թէ ունի գրութիւն մի պատմական, որ այլ եւս նմանօրինակ գրուածոց պէս՝ կորուսեալ կը կարծուէր։ Հազիւ դարուս կէսերն իմացուեցաւ թէ կան ձեռագիր օրինակք մատենին, եւ սակաւ մի յետոյ՝ դարուս երկրորդ կիսոյն առաջին տասնեկին՝ երկու այլեւայլ տպագրութիւնք հրատարակուեցան՝ Սմբատ պատմագիր եւ Տարեգիրք Սմբատայ անուամբ։

Այս հրատարակութեանց վրայ քանի մի տարի անցնելէն ետեւ, յանկարծ յերեւան ելաւ այլ ընդարձակագոյն երկասիրութիւն Մատենագրիս, այն է՝ Օրինաց մատեան կամ Դատաստանագիրք, յորում կը բովանդակին Անսիզք (օրէնսդրութիւն) Անտիոքայ եւ Դատաստանագիրք Մխիթարայ Գոշի՝ նոր խմբագրութեամբ։ Եւ թէպէտ հնար չէ լիուլի ապահովութեամբ որոշել թէ այս գրութեանց որն է հնագոյնն, սակայն եւ այնպէս մեր

[1] Տարեգրոյս թէ տպագրեալ օրինակաց եւ թէ մեր ձեռագրին մէջ կը կարդանք. «Ի թուին ՈԾԷ. (= 1208) ծնաւ Սմբատ Գունդստաբլն՝ թարգմանող պատմութեանս»։ Բայց Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան երկու տարի յառաջ, այս ինքն՝ ՈԾԵ. (= 1206) տարին դնել պատշաճագոյն կը կարծէ. «Արժան համարիմ, կ'ըսէ, ՈԾԵ. ընթեռնուլ զհայ թուականն՝ զոր տպագիրք եւ թարգմանք ընթեռնուն ՈԾԷ.» (Բազմավէպ, 1876, էջ 320.) զնոյն այլ խօսքով կը հաստատէ ի գաղղիերէնն, ուր կը գրէ ի կարգին. Sempad ... naquit l'an 1206 (et non 1208) comme lui-même l'indique dans ses Annales, իսկ ի Ծան. 2 կը յաւելու. J'ai cru nécessaire de faire cette remarque; car ordinairement dans les éditions tant de l'original que des traductions des Annales de Sempad, on lit la date arménienne ՈԾԷ (657 = 1208) au lieu de ՈԾԵ (655 = 1206), que je préfère, et qu'exige la condition de l'histoire pour plusieurs raisons. (Անդ, էջ 292. Տես եւ Assises d'Antioche, Venise, 1876, Introduction, VIII.)

digitised by A.R.A.R.@